ՀԱՍՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԱԲԵՂՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

*Լրացավ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Սուրենի Աբեղյանի ծննդյան 80-ամյակը:*

*Ծնվել է 1937 թ. սեպտեմբերի 7-ին Երևանում՝ մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանի ընտանիքում. հայրը գիտնականի կրտսեր որդին էր՝ խոստումնալից դերասան Սուրեն Աբեղյանը, որ պատերազմի հենց առաջին օրերին կամավոր մեկնում է ռազմաճակատ և այդպես էլ չի վերադառնում... Քառամյա աղջնակի վաղ մանկությունն անցնում է պապի գորովալից հոգացության պայմաններում: Հենց նա էլ թոռնուհու մանուկ գիտակցությունը լուսավորում է գրականության, գիտության ու արվեստների սիրով, ինչն էլ կանխորոշում է նրա կյանքի հետագա ուղին:*

*1944 թ. դեռ յոթ տարին չբոլորած Հասմիկը, պապի խնդրանքով (այն ժամանակ դպրոց ընդունում էին ութ տարեկանից), ընդունվում է մայրաքաղաքի Մ. Գորկու անվան հայկական միջնակարգ դպրոցը, որն ավարտելով՝ 1955 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը՝ արժանանալով Մանուկ Աբեղյանի անվան կրթաթոշակի:*

*1959-ին ավարտելով համալսարանը՝ հաջորդ տարի աշխատանքի է անցնում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բնագրագիտության բաժնում, բանասիրական գիտության շատ կարևոր և մեր օրերում ոչ այնքան գնահատված մի բնագավառ, որ պահանջում է բազմակողմանի գիտելիքներ, մասնագիտական հմտություն և անմնացորդ նվիրում: Այս հատկանիշներով էլ բնութագրվում է Հ. Աբեղյանի մոտ վեց տասնամյա գիտական գործունեությունը Գրականության ինստիտուտում:*

*Երիտասարդ գիտաշխատողի առաջին քայլերն այդ հեղինակավոր գիտական հաստատությունում կապվում են հայ դասականների երկերի լիակատար գիտական հրատարակությունների հետ: Նա մասնագիտական առաջին*

*հմտությունները ձեռք է բերում Ռ. Պատկանյանի ակադեմիական բազմահատորյակն իրականացնող խմբում՝ անվանի բնագրագետներ Ա. Ինճիկյանի և Հ. Մուրադյանի ղեկավարությամբ: Մասնակցում է առաջին երկու հատորների պատրաստման աշխատանքներին: Չորրորդ հատորը՝ Նոր Նախիջևանի բարբառով արձակը, համահեղինակությամբ պատրաստում է Մ. Սաղյանի հետ: Իսկ արդեն ութերորդ՝ նամակների հատորը վստահվում է միայն նրան:*

*1973 թ. Հ. Աբեղյանը պաշտպանության է ներկայացնում "Իսահակյանը և ժողովրդական էպոսը" գիտական թեզը, որի համար նրան շնորհվում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Բայց նա շարունակում է հավատարիմ մնալ իր բնագրագիտական նախասիրություններին:*

*Ընթացքի մեջ էր Դ. Դեմիրճյանի երկերի գիտական հրատարակությունը: Ինստիտուտի հանձնարարությամբ Հ. Աբեղյանը ձեռնամուխ է լինում 11-րդ՝ դրամաների հատորի պատրաստմանը: Միաժամանակ առանձնահատուկ պատասխանատվությամբ է ստանձնում Մ. Աբեղյանի երկերի 8-րդ հատորը կազմող գործերի ("Մի քանի քերականական խնդիրների մասին" աշխատությունը, որ տպագրվում էր առաջին անգամ, "Նոր-Դարում" տպագրված հոդվածները՝ Խորենացու "Հայոց պատմության", բարբառների և երկբարբառների մասին և այլն) գիտական բնագրերի պատրաստմանը: Երկուսն էլ իրականացնում է գիտական պատշաճ մակարդակով:*

*1980-ական թվականներից աշխատանքներ են սկսվում Հովհ. Թումանյանի երկերի 10-հատորյա ակադեմիական հրատարակության համար, որ իրականություն պիտի դառնար ճակատագրական 1990-ականներին: Հ. Աբեղյանն այն նվիրյալներից էր, որ չնայած այդ ցուրտ ու մութ տարիների ծանր փորձություններին՝ կարողացան հաղթահարել բոլոր դժվարությունները և ավարտին հասցնել այդ նվիրական գործը: Անձամբ նա ծանրակշիռ ներդրում ունի 2-րդ և մանավանդ 8-րդ՝ ծոցատետրերի, օրագրերի, տարբեր գրությունների հատորների պատրաստման աշխատանքներում:*

*Գրականության ինստիտուտում այժմ պատրաստվում է Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության քառահատոր տարեգրությունը, որի առաջին երկու հատորները (1869–1908 և 1909–1914 թթ.) արդեն լույս են տեսել: Հրատարակության է պատրաստ երրորդ հատորը (1915–1919 թթ.), պատրաստվում է չորրորդ հատորը: Հ. Աբեղյանն իր բազմամյա փորձով և թումանյանագիտական իմացություններով անփոխարինելի ներդրում ունի բոլոր հատորներում:*

*Գրականության ինստիտուտում Թումանյանի թանգարանի հետ համատեղ սկսվել են բանաստեղծի ակադեմիական 10-հատորյակի բարեփոխված*

*վերահրատարակության աշխատանքները: Հ. Աբեղյանը, չդադարեցնելով աշխատանքը տարեգրության վերջին հատորի վրա, արդեն սկսել է նոր հրատարակության համար պատրաստել իր կազմած երկրորդ՝ քառյակների և բալլադների հատորը:*

*Բնությունը Հ. Աբեղյանին օժտել էր նաև գուցե հորից ժառանգաբար անցած դերասանական շնորհքով. նա կարողանում էր, հիմա էլ կարողանում է կատարելապես նմանակել մանկահասակ երեխաների ձայները՝ աղջիկ, թե տղա: Նրա այդ շնորհքն աննկատ չի մնում, և նա, իր համար էլ անսպասելի, հայտնվում է թատերական աշխարհում: Նրան շնորհում են դերասանական կարգ և անդամագրում Թատերական գործիչների միությանը: Սկսած 1960 թվականից՝ մոտ երեք տասնամյակ Հայֆիլմ կինոստուդիայում, հայկական ռադիոյի մանկական և դրամատիկ հաղորդումների խմբագրություններում, հեռուստատեսային հաղորդաշարերում շատ հայտնի դերասան-դերասանուհիների հետ մասնակցում է մանկական բազմաթիվ բեմադրությունների, մուլտիպլիկացիոն և տիկնիկային ֆիլմերի նկարահանումների և կրկնօրինակումների: Դրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ "Վինպինգվինը", այսօր էլ չեն իջնում հեռուստատեսային էկրաններից:*

*2015 թ. լույս տեսավ Հ. Աբեղյանի "Օրերս ինձ հետ են" խորհրդանշական խորագրով հուշերի գիրքը, որը լայն արձագանքի արժանացավ ընթերցողների շրջանում ոչ միայն բովանդակությամբ, այլև՝ շարադրանքի վարակիչ հուզականությամբ ու պարզ անմիջականությամբ, որ վկայում են հուշագրողի մի նոր՝ գրական շնորհքի մասին: Դա ավելի նկատելի է 2017-ին լույս տեսած "Համբուրգյան մտորումներ" գրքույկում, որն արդյունք է հանգամանքների բերումով գերմանական այդ քաղաքում՝ որդու մոտ անցկացրած օրերի:*

*Հեշտ չի եղել Հ. Աբեղյանի ութսունամյա կյանքի ուղին: Բայց նա, հետևելով մեծն Թումանյանի իմաստուն խորհրդին, արժանապատվությամբ է կրել իր ճակատագրի բեռը՝ միշտ արևի պես նայելով աշխարհին ու մարդկանց:*

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ